



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՅ ՀՈԳԵՒՈՐ ԵՂԲԱՅՐԱԿՅՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 13 Յունուարի յետմիջօրեին ընդունեց այցելութիւնը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Եղբայրակցութեան պատուիրակութեան, որ Ազգ. Առաջնորդարան եկած էր Ամանորի ու Ս. Ծննդեան տօներուն առիթով շնորհաւորանք ու բարեմաղթութիւն ներկայացնելու Առաջնորդ Սրբազանին: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր Արշակ Եղբայր Գալէնտերեան:

Հիւր պատուիրակութեան անդամները Առաջնորդ Սրբազանին հակիրճ տեղեկութիւններ տուին Եղբայրակցութեան եկեղեցանուէր ու ժողովրդանուէր ծառայութիւններուն մասին: Անոնք նաեւ գոհունակութիւն արտայայտեցին, որ Նորթ Հոլիվուտի մէջ հաստատուած է ծխական նոր համայնք մը, ու յաւելեալ տեղեկութիւններ խնդրեցին այդ մասին: Առաջնորդ Սրբազանը բացատրեց, թէ ծխական համայնքը հաստատուեցաւ տարեսկիզբին, Ս. Ծննդեան տօնին առիթով ունեցաւ իր անդրանիկ Ս. Պատարագը, իսկ այսուհետեւ, ամէն Կիրակի Ս. Պատարագ պիտի մատուցուի եկեղեցւոյ մէջ, նաեւ կազմակերպուած են Ս. Գրոց Սերտոզութեան պահեր:

Հանդիպումը նաեւ առիթ ծառայեց խորհրդակցելու Եղբայրակցութեան ու մեր եկեղեցիներուն միջեւ գործունեութեան հասարակաց դաշտերուն ու զանոնք աւելի եւս զարգացնելու կարելիութիւններուն մասին: Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ Եղբայրակցութեան գործունեութեան մասին ու ողջունեց գործակցութիւնը սերտացնելու ներկայացուցիչներուն պատրաստակամութիւնը: Ան այս առիթով նաեւ յուշանուէրներ յանձնեց պատուիրակութեան անդամներուն:

**PRELATE WELCOMES MEMBERS OF THE ARMENIAN
ECCLESIASTICAL BROTHERHOOD**

On the afternoon of Tuesday, January 13th, members of the Armenian Ecclesiastical Brotherhood visited the Prelacy to convey their New Year and

Christmas well wishes to H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The delegation was headed by Brother Arshag Kalenderian.

During their visit the guests relayed information to the Prelate about the current endeavors of the Brotherhood. In addition, they expressed joy at the establishment of a parish in North Hollywood and requested further information from the Prelate with regards to this new endeavor. The Prelate informed the Brotherhood members that the first Divine Liturgy at the parish was celebrated on the Feast of the Birth and Theophany and that thereafter Divine Liturgy is being celebrated every Sunday afternoon and weekly Bible study is also being offered.

In conclusion, the Prelate commended the service of the members and welcomed further collaboration between the Prelacy and the Ecclesiastical Brotherhood. The visit concluded with the presentation of mementos by the Prelate.